Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մոնիթորինգ

Արա Ղազարյան
Արտակ Զեյնալյան
16.06.2014

Ներածություն

Հետազոտության նպատակն է պարզելը, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը որպես ԵԽ անդամ պետություն կատարում իր պարտավորությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ուղղությամբ: Հետազոտությունը ընդգրկում է ՄԻԵԴ-ի կողմից ընդունված բոլոր այն վճիռները, որոնք արդեն ընդգրկվել են ԵԽ նախարարների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կատարողական վարույթում: Նշված գործերի ցանկը անընդհատ թարմացվում է և հասանելի է Կոմիտեի կայքում (http://www.coe.int/t/dghl/monitoring/execution/Reports/pendingCases_en.asp):
Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել այս թեմայով երկու նախկին ուսումնասիրությունները, որոնք կատարվել են ՀՀ փաստաբանների պալատի և ԵԱՀԿ գրասենյակի համագործակցությամբ: Դրանցից վերջինով ուսումնասիրության շրջանակը սահմանափակվել է մինչև 2013 թվականի հուլիս ամիսը: Հետևաբար, սույն հետազոտության ուսումնասիրման շրջանակը սկսում է 2008 թվականից (երբ սկսվեցին առաջին գործերով վարույթները) և ավարտվում մինչև **2014 թվականի մայիս** ամիսը:
Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Կոմիտեի փաստաթղթերը,[1] կոնկրետ անձանց (օրինակ՝ հայցվորների կամ նրանց ներկայացուցիչների) հետ մեր մասնագետների հարցազրույցները, սույն հետազոտության հեղինակների տիրապետության տակ գտնվող փաստաթղթերը (քանի որ մի շարք գործերով նրանք անձամբ մասնակցում վճռի կատարման վարույթներին, օրինակ՝ գործի վերաբացման դատական գործերին), դատական որոշումները, ՋԼՄ-ների հրապարակումները, ՀՀ կառավարության որոշումները, և այլն:
Հետազոտություն ներկայացված է պարզ ու մատչելի եղանակով: Փորձը ցույց է տալիս, որ լայն ընթերցողները խորը և երկար վերլուծություններ չեն կարդում: Ուստի, ընտրվել է տեքստի հակիրճ ֆորմատ. յուրաքանչյուր գործով ներկայացվում է համառոտ տեղեկություն գործի անվան, փաստերի և վարույթի ընթացքի մասին, իսկ այնուհետև ներկայացվում է հակիրճ տեղեկություն կիրառված միջոցների մասին, որին հետևում է եզրահանգում վճռի կատարված լինելու կամ չլինելու վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքները ավելի ակնառում դարձնելու համար որոշեցինք դրանք պատկերել նաև ստորև նշված աղյուսայի միջոցով: Եթե տվյալ գործով վճռի կատարման ուղղությամբ պետական մարմինները ձեռնարկել են շոշափելի միջոցներ (անկախ այն հանգամանքից, թե վարույթը ավարտված է, թե ոչ), զարգացման միտումը տրվել է «պոզիտիվ», իսկ եթե նկատվել է էական

[1] Կոմիտեն հրապարակում է ոչ միայն յուրաքանչյուր կոնկրետ գործով վարույթի պատմությունը, այլ նաև կողմերի ներկայացրած գրավոր նկատառումները՝ պատասխանող պետության կառավարության Գործողությունների ծրագիրը կամ զեկույցը, հայցվորի կամ որևէ երրորդ անձի հաղորդումները տվյալ գործով վճռի կատարման ընթացքի մասին:

անգործություն, զարգացման միտումը սահմանվել է նեգատիվ: Այս լույսի ներքո գնահատվել են նաև այն գործերը, որոնց կատարողական վարույթները Կոմիտեն հայտարարել է փակված՝ այսինքն ավարտված: Օրինակ, թեև Մելտեքս ՍՊԸ-ի գործով Կոմիտեն հայտարարել է, որ ՀՀ-ն կատարել է վճռից բխող իր պարտավորությունները և այդ առումով հայտարարել է վարույթը փակված, նշված գործով զարգացման միտումը ներկայացվել է «նեգատիվ», որի համար բացատրությունը ներկայացված է համապատասխան բաժնում: Կամ, թեև վարչական կալանքի որոշ գործերով իշխանությունները ձեռնարկել ու կիրառել են նշանակալի քայլեր (վարչական կալանքի վերացումը, վարչական իրավախախտումների մասին օրենքի շարունակ բարեփոխումները, և այլն), սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն մի քանի տարի է, ինչ ՀՀ կառավարությունը չի տրամադրում Կոմիտեին տեղեկատվություն կալանավայրերում իրականացվող բարեփոխումների մասին, նշվածը համարվել է որպես էական անգործություն և զարգացման ընդհանուր միտումը գնահատվել է նեգատիվ: Այսինքն, փորձ է արվել գնահատման մեխանիզմը հեռու պահել սխեմատիկ մոտեցումից և անկախ այն հանգամանքից, թե իշխանությունների կողմից ինչ ծավալով քայլեր են ձեռնարկվել տվյալ գործով վճռի կատարման ուղղությամբ, եթե հայտնաբերվել է էական անգործություն, որը կարող է ազդել տվյալ գործով վարույթի ելքի վրա կամ ներպետական մակարդակում ընդհանուր իրավիճակի վրա, մենք վճռի կատարման ընթացքը գնահատել ենք նեգատիվ: Նույնը պետք է ասել նաև հակառակ իմաստով: Օրինակ՝ թեև Մելիքյանի գործով կատարողական վարույթը Կոմիտեում դեռ չի սկսվել, սակայն զարգացման վեկտորը գնահատվել է պոզիտիվ, քանի որ այն խախտումը, որը արձանագրվել է ՄԻԵԴ-ի կողմից, ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում վերացել է դեռ 2006 թվականին: Բնականաբար, եթե հրաժարվում ենք գնահատման սխեմատիկ եղանակից, գերակշռում է գնահատման հայեցողական մոտեցումը: Եզրափակելով, անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ի համեմատություն 2008-2012 թվականների, 2013-2014 թվականների ընթացքում նկատելիորեն բարձրացել է ՀՀ կառավարության ակտիվությունը վճիռների կատարման վերահսկողական վարույթներում: Սա կարող է բացատրվել երեք հանգամանքով. առաջին, Նախարարների կոմիտեի կողմից 2011թ. հունվարից ներմուծվել է վերահսկողական վարույթի նոր մեխանիզմներ, որոնք նախատեսում են առավել մանրամասն կարգավորված հաղորդումների մեխանիզմ պատասխանող պետության և Կոմիտեի միջև (Գործողությունների ծրագիր կամ Գործողությունների զեկույց), երկրորդ, նկատվում է նաև ակտիվությունը քաղաքացիական հասարակության կողմից, որի ներկայացուցիչները 2013 թվականին մի շարք գործերով ներկայացրել են հաղորդումներ Կոմիտեի կանոնակարգի 9.2. կետի համաձայն, և երրորդ, դա կարող է պայմանավորված լինել նաև Նախարարության կողմից նախաձեռնված ակտիվությամբ:

Վճիռների կատարման գնահատականը

N/N	Գործի անվանումը	նեգատիվ	պոզիտիվ	ավարտվել է
1	Ամիրյանն ընդդեմ Հայաստանի		→	
2	Անտոնյանն ընդդեմ Հայաստանի		→	
3	Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստ.	←		
4	Աշուղյանն ընդդեմ Հայաստանի		→	
5	Ասատրյանն ընդդեմ Հայաստանի	←		
6	Բայաթյանն ընդդեմ Հայաստանի		→	
7	Բուխարաթյանն ընդդեմ Հայաստանի		→	
8	Գաբրիելյանը ընդդեմ Հայաստանի		→	
9	Գալստյանն ընդդեմ Հայաստանի		→	
10	Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1)		→	
11	Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2)		→	
12	Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի		→	
13	Դանիելյանը ու այլոք ընդդեմ Հայաստանի		→	
14	Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի		→	
15	Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի	←		
16	Թունյանն ընդդեմ Հայաստանի		→	
17	Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի	←		

18	խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի			
19	Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի			
20	Կարապետյանն ընդդեմ Հայաստանի			
21	Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի			
22	Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի			
23	Հարությունյանն ընդդեմ Հայաստանի			
24	Հովհաննիսյանը և Շիրոյանը ընդդեմ Հայաստանի			
25	Մալխասյանն ընդդեմ Հայաստանի			
26	Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի			
27	Մելիքյանն ընդդեմ Հայաստանի			
28	Մելտեքս ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի			
29	Մինասյանը և Սեմերջյանը ընդդեմ Հայաստանի			
30	Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի			
31	Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի			
32	Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի			
33	Նիկողոսյանն ու Մելքոնյանը ընդդեմ Հայաստանի			
34	Շոլոխովն ընդդեմ Հայաստանի			
35	Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի			
36	Պողոսյանն ընդդեմ Հայաստանի			

37	Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի			
38	Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի			
39	Սափեյանն ընդդեմ Հայաստանի			
40	Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի			
41	Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի			
42	Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի			
43	Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի			

Ամիրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 31553/03
Վճիռը կայացվել է. 13.01.2009
Ուժի մեջ է մտել. 13.04.2009

Տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Աշուղյանն ընդդեմ Հայաստանի*
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-1
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-2
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Անտոնյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 3946/05
Վճիռը կայացվել է. 02/10/2012
Ուժի մեջ է մտել. 02/01/2013

Սույն գործում արձանագրվել է գույքային իրավունքի խախտում այն հիմքով, որ գույքի սեփականատիրոջը չի հաջողվել հավառումից հանել իր զարմուհու երկու երեխաներին, քանի որ և ոստիկանությունը, և դատարանը սահմանել էին, որ երեխաները ունեին գույքի օգտագործման իրավունք, որը հնարավոր էր դադարեցնել միայն սեփականատիրոջ կողմից փոխհատուցման վճարումով, մինչդեռ: Դա որոշելիս հղումեր կատարվել կառավարության որոշման վրա, որը, ի տարբերություն օրենսդրության, գույքային իրավունքի առկայությունը կապում էր հաշվառման հանգամանքի հետ: Նման պայմաններում առաջանում էր անորոշություն այն առումով, թե արդյոք հաշվառումը հիմքեր է ստեղծում գույքային (օգտագործման) իրավունք հայցելու համար: Թեև օրենսդրությունը հստակորեն այդ հարցին պատասխանում էր բացասական հիմքով, իրավակիրառողները՝ դատարանը և ոստիկանը դեռ շարունակում էին առաջնորդվել նախկին իրավակարգավորմամբ: Արդյունքում, դատարանը սահմանեց, որ խախտվել էր օրինականության (իրավական որոշակիության) սկզբունքը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հիմքով:

Եզրահանգում

Անհատական միջոցներ - կառավարությունը վճարել է սահմանված փոխհատուցման գումարը սույն թվի 2013թ. մարտի 29-ին: Նույն թվի հունվարի 8-ին դիմումատուն ներկայացրել է գործի վերաբացման դիմում Վճռաբեկ դատարան, որը վերջինս բավարարել է, բեկանել է իր նախկին որոշումը և գործը ուղարկել Վարչական դատարան նոր քննության:[2] Այս քննությունը վարչական դատարանում դեռ ընթացքի մեջ է: Բացի գործի վերաբացումից, առկա է նաև իրավական պաշտպանության մեկ այլ միջոց. ՀՀ կառավարության թիվ 1231-Ն որոշման 8.1. կետի համաձայն, անձը իրավունք ունի մեկ այլ անձի իր գույքի հաշվառումից հանելու պահանջով դիմել պատկան մարմիններին: Սակայն Դիմողը պաշտպանության այս իրավունքից չի օգտվել: Նման պայմաններում գտնում ենք, որ *անհատական* միջոցները կատարվել են՝ բացառությամբ, եթե վարչական դատարանում գործի քննության ընթացքում կրկին տեղի ունենա Կոնվենցիայի խախտում:

[2]Վճռաբեկ դատարանի 24.05.2013թ որոշման համաձայն Թիվ 3-1338/(ՎԴ) գործն ուղարկվել է նոր քննության

Ընդհանուր բնույթի միջոցների առումով անհրաժեշտ է նշել, որ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության կայքում: Այն նաև ներկայացվել է դատավորներին՝ նրանց վերապատրաստման դասընթացների շրջանակներում: Օրենսդրական փոփոխությունների առումով Կառավարությունը Գործողությունների ծրագրում ներկայացրել է, որ «օգտագործման իրավունք» հասկացությունը դեռ 2005 թվականի հոկտեմբերի 4-ին հստակեցվել է՝ այդ հասկացությունը ներմուծելով Քաղաքացիական օրենսգիրք (225-րդ հոդված)[3], որը նման իրավունքի ծագման և դադարեցման միակ հիմք է համարում սեփականատիրոջ հետ համաձայնությունը և նույն սեփականատիրոջ որոշումը իրավունքը դադարեցնելու մասին: Այսպիսով, օրենսդրության մեջ խնդրո առարկա անորոշությունը լուծվել է դեռ 2005 թվականին՝ դիմումը ՄԻԵԴ ուղարկելուց մոտ երկու ամիս առաջ:[4] Նման պայմաններում գտնում ենք, որ ընդհանուր բնույթի միջոցները նույնպես կատարվել են:

[3] Այս առումով տե՛ս ՄԻնասյանն ու Սեմիրջյանն ընդդեմ Հայաստանի գործով որոշման մեջ ՄԻԵԴ եզրահանգումները 225-րդ հոդվածի մասով, որը առանցքային եղավ երկրարդ դիմումատուի (օգտագործողի) մասով դիմումի ընդունելիության համար:

[4] Դիմումը մուտքագրվել է դատարան 17/01/2005թ.ին, իսկ օրենսդրական փոփոխությունը կատարվել է 04/10/2004թ.-ին:

Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 34334/03
Վճիռը կայացվել է. 15.06.2010
Ուժի մեջ է մտել. 15.09.2010

Աշոտ Հարությունյանի գործում արձանագրվել են հետևյալ խախտումները. առաջին, կալանավայրում բացակայում էին բուժման համար անհրաժեշտ պայմաններ (սարքավորումներ, բժշկական անձնակազմ, և այլն), ինչպես նաև, որ չէր տրամադրվել անհրաժեշտ բժշկական խնամք։ Այս երկու հիմքով արձանագրվել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ անմարդկային վերաբերմունք։ Երկրորդ, դատաքննության ժամանակ նա պահվել էր երկաթե ճաղավանդակի մեջ, որը հանգեցրել էր նվաստացուցիչ վերաբերմունքի՝ նույնպես 3-րդ հոդվածի հիմքով։
Վարույթի ընթացքում Կոմիտեն ՀՀ կառավարությունից խնդրել է ներկայացնել տեղեկատվություն այն մասին, առաջին, թե ինչպիսին է ընդհանուր իրավիճակը կալանավայրերում բժշկական սպասարկման հետ կապված, երկրորդ, դատարաններում ճաղավանդակներում պահելու պրակտիկայի կետ կապված։ ՀՀ կառավարությունը այս հարցերին դեռ չի պատասխանել։
Վարույթի ընթացքում ստացվել է Հելսինկի քաղաքացիական անսամբլեա Վանաձորի գրասենյակի (ՀԿ) հաղորդումը այն մասին, որ կալանավորների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի գործերով ոչ պատշաճ քննություն և դատախազական վարհսկողություն է իրականացվում՝ այդ թվում նաև այն հանգամանքը, որ բժշական սպասարկումը կալանավայրերում դեռ մնում է ոչ պատշաճ մակարդակի։ Կառավարությունը ի պատասխան ներկայացրել է, որ իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որպեսզի անազատության մեջ գտնվող կալանավորներին տրամադրվեն պատշաճ իրավական պաշտպանության միջոցներ, օրինակ, Կառավարության թիվ 826 որոշման կարգավորումը, համաձայն որի ձերբակալված ու կալանավորված անձը իրավունք ունի անհապաղ ստանալ բժշկական սպասարկում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքերով և ինչ ռեժիմի պայմաններում է պահվում անազատության մեջ։

Եզրահանգում

Անհատական միջոցներ - Կառավարությունը կատարել է սահմանված փոխհատուցման վճարը (16,000 եվրո)։ Դիմումատուի իրավահաջորդը չի ներկայացրել գործի վերաբացման դիմում (դիմումատուն մահացել է կալանավայրում)։

Ընդհանուր միջոցներ - վճիռը թարգմանվել ու հրապարակվել է, ինչպես նաև ընդգրկվել է դատավորների և դատախազներ վերապատրաստման ուսումնական ծրագրերում: Կոմիտեն արդեն տևական ժամանակ է, ինչ ՀՀ կառավարությունից սպասում է տեղեկատվություն այն մասին, թե ինչ միջոցներ են կիրառվել կամ նախատեսվում է կիրառել կալանավայրերում բժշկական սպասարկման բարելավման ուղղությամբ: Կոմիտեն սպասում է նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ միջոցներ են կիրառվել դատարաններում երկաթե ճաղավանդակների ուղղությամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը, կարծում ենք, որ վճիռը անհատական միջոցների առումով կատարվել է, իսկ ընդհանուր բնույթի միջոցների առումով՝ ոչ:

Աշուղյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *33268/03*
Վճիռը կայացվել է. *17.07.2008*
Ուժի մեջ է մտել. *01.12.2008*

Տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Ամիրյանն ընդդեմ Հայաստանի*
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-1
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-2
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Ասատրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 24173/06
Վճիռը կայացվել է. 09/02/2010
Ուժի մեջ է մտել. 09/05/2010

Տե՛ս նաև.

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի
Մալխասյանն ընդդեմ Հայաստանի
Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Սիլվա Ասատրյանի գործում արձանագրվել էր խախտում այն հիմքով, որ կալանավորը մոտ 19 ժամ մնացել էր խափանման միջոց կալանքի տակ առանց դատարանի որոշման: Նման իրավիճակ ստեղծվել էր այն պատճառով, որ կալանքի ժամկետի երկարաձգման մասին միջնորդությունը քննիչի կողմից ներկայացվել էր ուշացումով և առաջին ատյանի դատարանին որոշումից հետո, որը որոշել էր բավարարել միջնորդությունը, Վերաքննիչ դատարանը կալանքի ժամկետի երկարաձգման դատական ստուգման վարույթը իրականացրել էր ձգձգումով, որի արդյունքում որոշումը կայացվել էր ժամկետի սպառվելուց հետո: Եվրոպական դատարանը արձանագրել էր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ-կետի՝ օրինականության սկզբունքի խախտում: Դատարանը սահմանել է 2,500 եվրո փոխհատուցում ոչ նյութական վնասի և դատական ծախսերի դիմաց:

Եզրահանգում

Անհատական բնույթի միջոցները կատարվել են. սահմանված փոխհատուցումը վճարվել է, իսկ գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր բնույթի միջոցների շարքում Կոմիտեն չի սահմանել որևէ միջոցառման անհրաժեշտություն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Կոմիտեն ՀՀ իշխանություններից սպասում է Գործողությունների ծրագիր կամ զեկույց: Կոմիտեն այս փաստաթղթերից որևէ մեկի ներկայացմանը սպասում է արդեն նկատելիորոն երկար ժամանակ: Հաշվի առնելով նշվածը, գտնում ենք, որ վճռի կատարման ուղղությամբ գործնական քայլեր չեն ձեռնարկվում:

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *23459/03*
Վճիռը կայացվել է. *07/07/2011*
Ուժի մեջ է մտել. *07/07/2011*

Սույն գործը Կոմիտեի կողմից ընտրվել է որպես առանցքային (LEAD)։ Այս առումով, տե՛ս նաև.

Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի
Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի

Սույն գործում արձանագրվել էր Կոնվենցիայի 9-րդ հոդվածի (մտքի, խղճի և կրոնի ազատության) խախտում այն հիմքով, որ առանց անձին այլընտրանքային զինվորական ծառայության հնարավորություն ընձեռելու, իշխանությունները անձին դատապարտել են պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու համար, որտեղ ծառայությունից հրաժարվելը կատարվել էր կրոնական համոզմունքներից ելնելով։ Այն ժամանակահատվածում, երբ Բայաթյանը դատապարտվել էր, ՀՀ-ում դեռ չկար այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենք, հետևաբար, դատապարտումը կատարվել էր օրենքով սահմանված կարգով, սակայն ընդհանուր առմամբ անիրավաչափ միջոց էր, եթե դա կատարվում էր այլընտրանքային համակարգի բացակայությամբ։

Եզրահանգում

Անհատական միջոցների շարքում իշխանությունները կատարել են սահմանված փոխհատուցման վճարումը (20,000 եվրո), իսկ Բայաթյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է. նա ազատ է արձակվել մինչև սահմանված պատժի վերջնական կրումը։ 2013 թվականին ընդունված ՀՕ-32-Ն օրենքի համաձայն Բայաթյանը համարվում է դատվածություն չունեցող անձ։ Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել։ Հետևաբար, անհատական միջոցները կատարվել են։
Ընդհանուր բնույթի միջոցների շարքում ՀՀ իշխանությունները էական փոփոխության են ենթարկել Այլընտրանքային ծառայության մասին 2004 թվականի օրենքը։ Սա նաև ԵԽ մարմինների պահանջն էր։ Մասնավորապես, ԵԽԽՎ-ն ՀՀ իշխանություններից բազմիցս պահանջել է ընդունել «*եվրոպական չափանիշներին համապատասխան այլընտրանքային ծառայություն*», որը կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող մարդկանց համար «*կապահովի հստակորեն արտահայտված քաղաքացիական բնույթի իսկական այլընտրանքային ծառայություն, որը չպետք է լինի ո՛չ կանխարգելող, և*

ոչ էլ պատժող բնույթի»:[5] Այսպիսով, սույն գործի շրջանակներում պահանջվում էր այլընտրանքային զինվորական ծառայությունը վերածել քաղաքացիական բնույթի ծառայության կամ, առնվազն, նման հնարավորություն տալ այն անձանց, ովքեր կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվում են զինվորական ծառայությունից: Այս առումով 02/05/2013թ. Ազգային ժողովը ընդունել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք, որն ուժի մեջ է մտել 2013թ. հունիսի 8-ից: Օրենքում նշվում է, որ **այլընտրանքային զինվորական** ծառայության կարող է անցնել այն անձը, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը, իսկ **այլընտրանքային աշխատանքային** ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը: Այլընտրանքային զինվորական ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, իսկ այլընտրանքային **աշխատանքային** ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման հատուկ մարմինը (հոդվ. 14): Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվել է մինչև 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ մինչև 36 ամիս: Անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել նաև Քրեական օրենսգրքով, որի համաձայն անձինք, ում նկատմամբ իրականացվում էր քրեական հետապնդում կամ ովքեր դատապարտվել էին պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու համար մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը, կարող էին դիմել այլընտանքային ծառայության համար և այդ դեպքում նրանց նկատմամբ քրեական հետպանդումը դադարեցվում էր իսկ դատապարտված անձինք համարվում էին դատվածություն չունեցող: Փաստերը ցույց են տալիս, որ տասնյակ նման դիմումներ են քննվել: Իսկ ինչ վերաբերում է ներկա իրավակարգավորմանը, ապա ներկայումս անձը կարող է դատապարտվել Քրեական օրենսգրքի համաձայն միայն այն դեպքում, եթե հրաժարվում է և՛ պարտադիր զինվորական ծառայությունից, և՛ այլընտրանքային զինվորական ծառայությունից:

Կառավարության ներկայացրած Գործողությունների վերջնական ծրագիրը դեռ ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից: Այդուհանդերձ, մենք գտնում ենք, որ սույն գործով (և նմանատիպ երկու գործերով) ՄԻԵԴ վճիռները կատարվել են:

[5] ԵԽԽՎ 2007թ. թիվ 1532 Բանաձևը «Հայաստանի ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբարյալ»: Տե՛ս նաև ԵԽԽՎ 2009թ. Թիվ 1609 Բանաձևը, § 16.4, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմերբերգի զեկույցը, փաստաթուղթ CommDH(2011)12 փաստաթուղթը, § 122 և 156-158, որում Հանձնակատարը նշում է, որ 2011 թվականի դրությամբ Այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքը իր բնույթով քաղաքացիական չէ, քանի որ վերահսկվում է ռազմական կառույցների կողմից: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողովի 20/12/2011թ. թիվ 644/2011 Կարծիքը նմանատիպ եզրահանգումների մասին:

Բուխարաթյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *37819/03*
Վճիռը կայացվել է. *10/01/2012*
Ուժի մեջ է մտել. *07/07/2011*

Տե՛ս *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի։*

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 37819/03
Վճիռը կայացվել է. 10/01/2012
Ուժի մեջ է մտել. 07/07/2011

Եվրոպական դատարանը արձանագրել է դատավարական բնույթի երկու խախտում՝ արդյունավետ իրավաբանական պաշտպանության բացակայություն և իր դեմ ցուցմունք տված վկային դատարանում հակընդեմ հարցման ենթարկելու անհնարինություն: Խախտումները արձանագրվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի գ-կետի և դ-կետի հիմքերով, որոնք հանգեցրել են 1-ին մասի խախտմանը՝ արդար դատաքննության իրավունք: ՄԻԵԴ-ը սահմանել է 4,100 եվրո փոխհատուցում ոչ նյութական վնասի և դատական ծախսերի դիմաց:

Եզրահանգում

Անհատական միջոցների շարքում փոխհատուցման գումարը վճարվել է, իսկ դիմողը ներկայացրել է գործի վերաբացման դիմում, որն ընդունվել է վարույթ Վճռաբեկ դատարանի կողմից, որի շրջանակներում դատարանը կայացրել է գործի վերաբացման մասին որոշում, բեկանել է իր 06.08.2004թ. որոշումը և գործը ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության՝ այդպիսով վերականգնելով մինչև խախտումը եղած իրավիճակ: Ներկայումս գործով քննությունը ընթացքի մեջ է Ավան և Նոր-նորքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:
Ընդհանուր բնույթի միջոցների շարքում արվել են հետևյալ քայլերը. վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և Արդարադատության նախարարության կայքում, վճիռը ընդգրկվել է դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացների ծրագրերում և ներկայացվել է նրանց այդ դասընթացների շրջանակներում: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում հավելյալ երաշխիքներ են սահմանվել դատարաններում հակընդդեմ հարցման իրավունքի առավել արդյունավետ ապահովման նպատակով, մասնավորապես, նախատեսվել են հատուկ ընթացակարգեր անանուն վկաների հարցման (հոդված 333), վկաների նախաքննության ցուցմունքների հրապարակման համար (հոդված 336), որի առումով իրավակարգավորումը արվել է այնպես, որ նախաքննական ցուցմունքների հրապարակումը և օգտագործումը դատարանում արվի որպես խիստ բացառություն, այլ ոչ թե օրինաչափություն: Նշված իրավակարգավորումները կոչված են բարձրացնելու հակընդեմ հարցման ինստիտուտի արդյունավետությունը:
Հաշիվ առնելով վերը նշված միջոցառումները, գտնում ենք, որ վճռի կատարման ուղղությամբ կիրառվում են գործնական քայլեր:

Գալստյանն ընդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	26986/03
Վճիռն ընդունվել է	15.11.2007
Ուժի մեջ է մտել	15.02.2008

Գալստյանի գործը առանցքային (LEAD) գործ է և այս իմաստով վարույթը իրականացվում է հինգ այլ գործերի համակցությամբ.

Ամիրյանն ընդդեմ Հայաստանի
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1)
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2)
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Հետևաբար, նշված գործերի կապակցությամբ վարույթի ընթացքի վերաբերյալ պետք է կարդալ ստորև։
Արշամ Գալստյանը, ինչպես նաև վերը նշված անձինք, ենթարկվել է 3-օրյա վարչական կալանքի Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 172-րդ հոդվածի հիմքով՝ հանրահավաքի ընթացքում հասարարակական կարգը խախտելու համար: Դատաքննությունը տևել է դատավորի աշխատասենյակում և տևել է մոտ 5 րոպե։ Դատավորը մերժել է պաշտպան և վկաներ հրավիրելու ու նրանց հարցաքննելու միջնորդությունընը: Եվրոպան դատարանը որոշել է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը նույն հոդվածի 3-րդ մասի բ-կետի զուգակցությամբ, քանի որ Ա. Գալստյանին չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, քանի որ առանց արտաքին աշխարհի ու փաստաբանի հետ կապ ունենալու պահվել է ոստիկանության բաժնում, որտեղ ենթարկվել է մի շարք քննչական գործողությունների՝ հարցաքննության և խուզարկության: Դատարանը նաև սահմանել է Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների խախտում, քանի որ 172-րդ հոդվածը նախատեսում էր պատիժ *«հասարակական կարգը և քաղաքացիների անդորրը խախտելու համար»,* որը խիստ ընդհանրական ձևակերպում էր և հաշվի առնելով, որ հասարակական կարգին առնչվող իրավախախտումները բազմազան են, նման ընդհանրացված ձևակերպումը չէր կարող համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Դատարանը սահմանել է նաև Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում, քանի որ խնդրո առարկա ժամանակահատվածում օրենքը հնարավորություն չէր տալիս բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 3,000 եվրո ոչ-նյութական վնասի դիմաց:

Եզրահանգում

Անհատական միջոցներ - կառավարությունը կատարել է փոխհատուցման գումարների վճարումը, այդ գործերը թարգմանվել ու հրապարակվել են, դրանց մասին լայնորեն տեղյակ են իրավաբանների համայնքում, դրանք կիրառվում են պրակտիկայում որպես նախադեպային որոշումներ։
Ընդհանուր միջոցներ - նշված որոշումների հիման վրա փոփոխության է ենթարկվել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 172-րդ հոդվածը։ 19.03.12թ.-ին ՀՕ-34-Ն օրենքով այս հոդվածը փոխարինվել է նոր և առավել մանրամասն դրույթներով, որն ապահովում է որոշակիություն։ Քանի որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերացվել է վարչական կալանքը, այլևս տեսականորեն հնարավոր չէ թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում։ Այդուհանդերձ, զարմանալի է, որ նշված օրենսդրական փոփոխությունների մասին ՀՀ կառավարությունը տեղյակ չի պահում Նախարարների կոմիտեին, քանի որ վերջինս մինչև այժմ սպասում է այդ մասին տեղեկատվության։Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածի խախտմանը, այս իմաստով դիմումատուները գործի վերաբացման դիմում չեն ներկայացրել։
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ ՀՀ-ն կատարել է այս վճռից բխող իր պարտավորությունները։ Սակայն այս եզրահանգումը կատարում ենք փոքր վերապահումով առ այն, որ օրենսդրական փոփոխությունների մասին տեղեկատվությունը դեռ չի տրամադրվում Նախարարների կոմիտեին։

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1)

Գործի համարը. *35944/03*
Վճիռը կայացվել է. *13.01.2009*
Ուժի մեջ է մտել. *13.04.2009*

Տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Ամիրյանն ընդդեմ Հայաստանի*
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-2
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2)

Գործի համարը. *22571/05*
Վճիռը կայացվել է. *16.06.2009*
Ուժի մեջ է մտել. *16.09.2009*

Տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Ամիրյանն ընդդեմ Հայաստանի*
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-1
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Ի հավելումն *Գալստյանի* գործում շարադրված նկատառումների, սույն գործում էական հանգամանք է այն, որ դիմումատուի՝ գործի վերաբացման դիմումի հիման վրա հարուցված վերանայման վարույթում առաջին ատյանի դատարանը ընդունեց, որ ՀՀ իշխանությունների կողմից տեղի է ունեցել Կոնվենցիայի և ներպետական օրենքների խախտում 2004 թվականին դիմումատուին վարչական կալանքի ենթարկելիս։ Սա առայժմ դեռ միակ գործն է, որտեղ գործի վերանայման վարույթի արդյունքում իշխանությունները ընդունում են խախտման փաստը։

Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 3627/06
Վճիռը կայացվել է. 10/07/2012
Ուժի մեջ է մտել. 17/12/2012

Վ. Գրիգորյանի նկատմամբ 2005թ. հարուցված գործը ՄԻԵԴ վճռի կայացման պահին դեռ ընթացքի մեջ էր։ Այդ ամբողջ ընթացքում (մոտ վեց տարի) քրեական գործը գտնվել է կասեցված վիճակում, թեև նա ունեցել է մեղադրյալի կարգավիճակ։ Հաշվի առնելով, որ այդ ընթացքում որևէ դատավարական կամ քննչական գործողություններ չեն կատարվել, Եվրոպական դատարանը սահմանել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի խախտում։ Սահմանվել է 2.500 եվրոյի չափով փոխհատուցում։

Եզրահանգում

Անհատական միջոցների մասով. փոխհատուցման համար սահմանված գումարը վճարվել է 14.03.2013թ.-ին։ Դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործը կարճվել է 06.09.2013թ.-ին։ Գործողությունների զեկույցը ներկայացվել է 13.11.2013թ.-ին, որը ներկայումս ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից։

Ընդհանուր բնույթի միջոցների մասով անհրաժեշտ է նշել, որ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում։ Վճիռը ներկայացվել է դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացներում, ընդգրկվել է Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրում։ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով որոշվել է վերացնել քրեական գործի անորոշ ժամկետներով կասեցման պրակտիկան։ Մասնավորապես, նախագծով առաջարկվում է սահմանել կոնկրետ ժամկետներ քրեական հետապնդման համար և ժամկետներից յուրաքանչյուրի վրա հասնելու դեպքում քրեական գործը կարճել, եթե գործը դատարան չի ուղարկվել։ Ի հավելումն, առաջարկվում է, որպեսզի քրեական գործի կասեցման ժամկետը ավարտվի վերը նշված ժամկետների հետ, որը նշանակում է, որ կասեցված գործը նույնպես պետք է կարճվի, եթե քրեական հետապնդման ժամկետի սպառվելու հետ գործը դատարան դեռ չի ուղարկվել։

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ վճիռը կատարվել է և՛ անհատական, և՛ ընդհանուր բնույթի միջոցառումների մասով։

Դանիելյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *25825/05*
Վճիռը կայացվել է. *09/10/2012*
Ուժի մեջ է մտել. *09/01/2013*

Տե՛ս *Մինասյանը և Սեմիրջյանը ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տես նաև *Հովհաննիսյանն ու Շիրոյանի ընդդեմ Հայաստանի*
Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Թունյանն ու այլոք ընդեմ Հայաստանի

Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *13913/06*
Վճիռը կայացվել է. *20.07.2010*
Ուժի մեջ է մտել. *20/10/2010*

Տե՛ս *Մինասյանը և Սեմիրջյանը ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տես նաև *Հովհաննիսյանն ու Շիրոյանի ընդդեմ Հայաստանի*
Դանիելյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Թունյանն ու այլոք ընդեմ Հայաստանի

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *41698/04*
Վճիռը կայացվել է. *02.12.2008*
Ուժի մեջ է մտել. *04.05.2009*

Տե՛ս *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի*
Կարապետյանն ընդդեմ Հայաստանի
Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի

Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *22812/05*
Վճիռը կայացվել է. *09/10/2012*
Ուժի մեջ է մտել. *11/02/2013*

Տե՛ս *Մինասյանը և Սեմիրջյանը ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տես նաև *Հովհաննիսյանն ու Շիրոյանի ընդդեմ Հայաստանի*
Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Դանիելյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 23978/06
Վճիռը կայացվել է. 01/12/2010
Ուժի մեջ է մտել. 01/03/2010

Սույն գործում արձանագրված խախտումը կայանում էր նրանում, որ անձանց օգտին կայացված բարենպաստ դատական ակտը չէր կատարվել: ՄԻԵԴ-ը արձանագրել է Կոնվենիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում: Ի հավելումն, արձանագրվել է նաև գույքային իրավունքի խախտում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հիմքով, քանի որ դատական ակտը վերաբերում էր չվճարված աշխատավարձերին: ՄԻԵԴ-ը սահմանել է 1,745 եվրոյի փոխհատուցում՝ բարոյական վնասի և դատական ծախսերի դիմաց:

Եզրահանգում

Անհատական միջոցներ – սահմանված փոխհատուցման գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – վճիռը թարգմանվել, հրապարակվել ու ներառվել է դատավորների նախապատրաստական վերապատրաստման դասընթացների ցուցակում: Կոմիտեն արդեն տևական ժամանակ է (2010 թվականից) սպասում է կառավարության Գործողությունների ծրագրին:
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ սույն գործով վճիռը կատարվում է թերի՝ կառավարությունը դրսևորում է անգործություն:

Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *23978/06*
Վճիռը կայացվել է. *27/11/2012*
Ուժի մեջ է մտել. *27/02/2012*

Տե՛ս նաև.

Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի

Մի խումբ անձանց նկատմամբ իրականացվել է քրեական հետապնդում ու նրանք պահվել են խափանման միջոց կալանքի տակ: Մի որոշ ժամանակ անց նրանց նկատմամբ քրեական գործը կարճվել է ու նրանք ազատ են արձակվել: Դիմել են փոխհատուցում ստանալու համար, բավարարվել է միայն նյութական վնասի ու դատական ծախսերի մասով պահանջը, իսկ ոչ նյութական վնասի դիմաց պահանջը մերժվել է օրենսդրության մեջ նման հիմքի բացակայության հիմքով:
Արձանագրվել են հետևյալ խախտումները. առաջին, բացակայել է հանցագործության կատարման հիմնավոր կասկածը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ-կետի համաձայն, երկրորդ, անօրինական կալանավորման դիմաց ոչ-նյութական (բարոյական) վնասի դիմաց նյութական փոխհատուցման բացակայությունը օրենսդրությունում, որը հանգեցրել է 5-րդ հոդվածի 5-րդ մասի խախտմանը:

Եզրահանգում

Անհատական միջոցներ – փոխհատուցման գումարները վճարվել են: Գործի վերաբացման դիմումներ չեն ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – սույն որոշման հիման վրա Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-1121 որոշմամբ հակասահմանադրական համարեց Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով վերջինս չէր նախատեսում բարոյան վնասի փոխհատուցման հիմք: Այս որոշման հիման վրա կառավարությունը մշակել է բարոյական վնասի հատուցման օրենսդրական նախագիծ: Օրենքը, ըստ ՍԴ որոշման, պետք է ընդունվի մինչև սույն թվի հոկտեմբերի 1-ը: Բարոյական վնասի փոխհատուցման շրջանակները սահմանվել են այն նույն իրավունքների շրջանակներում, որոնք մատնանշել է ՄԻԵԴ-ը սույն գործով՝ կյանքի իրավունք, խոշտանգումների արգելում, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք և դատապարտման դիմաց բողոքարկման իրավունք: Նշված վճիռը նաև թարգմանվել ու հրապարկվել է պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև ընդգրկվել է դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացների ծրագրում: Հաշվի առնելով նշվածը, գտնում ենք, որ իշխանությունները կատարում են վճիռը:

Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *37819/03*
Վճիռը կայացվել է. *10/01/2012*
Ուժի մեջ է մտել. *07/07/2011*

Տե՛ս նաև.

Բայթյանն ընդդեմ Հայաստանի որպես **առանցքային** գործ
Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի

Կարապետյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *22387/05*
Վճիռը կայացվել է. *27.10.2009*
Ուժի մեջ է մտել. *27.01.2010*

Տե՛ս *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի*
Կարապետյանն ընդդեմ Հայաստանի
Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի

Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *31237/03*
Վճիռը կայացվել է. *02.12.2008*
Ուժի մեջ է մտել. *04.05.2009*

Կիրակոսյանի գործը առանցքային (LEAD) գործ է և այս իմաստով վարույթը իրականացվում է երեք այլ գործերի համակցությամբ.

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի
Կարապետյանն ընդդեմ Հայաստանի
Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի

Լ. Կիրակոսյանի և վերը նշված երեք գործերով դիմողները ենթարկվել են 10-օրյա վարչական կալանքի 2004 թվականի ընթացքում: Եվրոպական դատարանը արձանագրել է երեք իրավունքների խախտում. կալանքի անմարդկային պայմաններ (Կոնվենցիայի 3-րդ հոդված), դատավճիռը բողոքարկելու անհնարինություն (թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդված) և պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակի ու հնարավորության բացակայություն (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի բ-կետ), որը հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի խախտմանը (6-րդ հոդվածի 1-ին մաս):

Եզրահանգում

Անհատական միջոցներ - կառավարությունը բոլոր գործերով վճարել է սահմանված փոխհատուցման գումարները: Դիմումատուներից ոչ մեկը գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: :
Ընդհանուր միջոցներ - Դեռ 2010 թվականին Կոմիտեն կառավարությունից խնդրել էր ներկայացնել տեղեկատվություն Նախագահի ՆԿ-328-ՆԳ հրամանագրի հիման վրա սկսված ՋՊՎ-ների վերանորոգման լայնամասշտաբ պետական ծրագրի արդյունքների մասին՝ հատկապես Արմավիրի և Էջմիածնի ՋՊՎ-ների մասով, քանի որ հենց այս հիմնարկներում էին վերը նշված գործերով իրավախախտման զոհերը պահվել վարչական կալանքի տակ: Կոմիտեն խնդրել էր նաև ներկայացնել տեղեկատվություն կալանքի պայմանների դեմ իրավական պաշտպանության միջոցների մասին, ինչ միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի մեկ կալանավորին հատկացված բնակելի տարածքը համախատասխանեցվի օրենքով սահմանված նվազագույն չափանիշի հետ (4 ք/մ), տեղեկատվություն այն մասին, թե արդյոք վերը նշված անձինք շարունակում են մնալ անազատության մեջ կամ թե արդյոք նրանց դատվածության մասին տվյալները շարունակում են պահպանվել: Նշված տեղեկությունները մինչ այժմ չեն տրամադրվել: Հետևաբար, այս ուղղությամբ նշված վճիռները չեն կատարվում:

Հակոբյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ.	34320/04
Վճիռը կայացվել է.	10/04/2012
Ուժի մեջ է մտել.	10/07/2012

Տե՛ս սույն գործով Գալստյանի գործով եզրահանգումները։
Տե՛ս նաև.

Ամիրյանն ընդդեմ Հայաստանի
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-1
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի - 2
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ.	36549/03
Վճիռը կայացվել է.	28.06.2007
Ուժի մեջ է մտել.	28.09.2007

Դիմողը դատապարտվել է զինծառայողի սպանության համար: Դատավճռում, ի թիվս այլ ապացույցի, դրվել են խոշտանգումով ստացված ապացույցներ՝ դիմողի և երկու վկաների նախաքննական ցուցմունքները: Եվրոպական դատարանը որոշել է, որ խոշտանգումով ստացված ապացույցը, անկախ այդ ապացույցի ապացուցողական նշանակությունից, երբեք չպետք է դրվի մեղադրանքի ու դատապարտման հիմքում և որ նման ապացույցի առկայությունը ապացույցների զանգվածում ինքնին հանգեցնում է ողջ դատաքննության անարդարացիությանը: Դատարանը սահմանեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում և սահմանեց 4,000 եվրո փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց: 02/12/2011թ.-ին Նախարարների կոմիտեց որոշեց փակել գործով վարույթը՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետությունը ամբողջությամբ կատարել է Եվրոպական դատարանի վճիռը:

Եզրահանգում

Դիմողի դիմումի հիման վրա հարուցվել է գործի վերաբացման ու վերանայման վարույթ, որի արդյունքում Վճռաբեկ դատարանը բեկանել է իր նախկին որոշումը, վերաբացել քրեական գործը և գործն ուղարկեց առաջին ատյանի դատարան նոր քննության: Նոր քննության ընթացքում առաջին ատյանի դատարանը կրկին կատարել է գործում առկա ապացույցների քննություն՝ սակայն դրանց շարքից նախապես հանելով խոշտանգումների միջոցով ստացված ապացույցները: Գործի նոր քննության ընթացքում, բոլոր դատավարական երաշխիքների պահպանմամբ, առաջին ատյանի դատարանը վերահաստատել է նախկին դատավճիռը: Գտնում ենք, որ սույն գործով Հայաստանի Հանրապետությունը կատարել է Եվրոպական դատարան վճիռը: Սահմանված փոխհատուցումը վճարվել է, իսկ նոր դատաքննության ընթացքում կրկին ուսումնասիրվել են գործով ստացված ապացույցները՝ առանց խոշտանգման եղանակով ստացված ապացույցների: Այստեղ, անկախ կայացված որոշումից, ավարտվում է Կոնվենցիայի վերահսկողության շրջանակը, քանի որ ապացույցների գնահատումը ազգային մարմինների իրավասության ներքո է՝ բացառությամբ, եթե վերաբացման վարույթում կրկին խախտվում է Կոնվենցիայի որևէ դրույթ, որը տվյալ դեպքում տեղի չի ունեցել:

Հովհաննիսյանն ու Շիրոյանը ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *5065/06*
Վճիռը կայացվել է. *20.07.2010*
Ուժի մեջ է մտել. *15/02/2012*

Տե՛ս *Մինասյանը և Սեմիրջյանը ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տես նաև *Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի*
Դանիելյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Թունյանն ու այլոք ընդեմ Հայաստանի

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	6729/07
Վճիռն ընդունվել է	26/06/2012
Ուժի մեջ է մտել	26/09/2012

Տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործը որպես **առանցքային** գործ:

Տե՛ս նաև.

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Մալխասյանի գործով արձանագրվել է խախտում երկու հիմքերով. առաջին, որ քրեական գործը նախաքննական մարմնի կողմից դատարանին փոխանցելիս սպառվել է խափանման միջոց կալանքի ժամկետը, որի արդյունքում անձը մինչև դատարանի կողմից նոր որոշման կայացումը մի որոշ ժամկետով մնացել էր կալանքի տակ՝ առանց դատարանի որոշման: Նման իրավակարգավորում սահմանված էր (և շարունակում է սահմանված մնալ) Քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասով: Երկրորդ խախտումը առնչվում էր կալանքի ժամկետների երկարաձգմանը ձևական ու շաբլոնային հիմքերով: Այս երկու հիմքերով արձանագրվել է կալանքի օրինականության սկզբունքի խախտում (5-րդ հոդվածի 1-ին մաս) և կալանքի ողջամիտ ժամկետների խախտում (5-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եզրահանգում

Տե՛ս նաև Պողոսյանի գործով եզրահանգումը:
Իշխանությունները ներկայացրել են Գործողությունների ծրագիր, որը ներկայումս ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից:
Անհատական միջոցներ - փոխհատուցման գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում: Այս գործը և վկայակոչված հինգ գործերով վճիռները ընդգրկվել են դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացներում:

Առաջին դրվագով սահմանված խախտումը այլևս չի կարող կրկնվել պրակտիկայում, քանի որ քրեական գործի լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը ճանաչվել է հակասահմանադրական ու վերացվել է: Ինչ վերաբերում է երկրորդ դրվագին, ապա այս առումով Կոնվենիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող ճանաչված պրակտիկան դեռ շարունակվում է կիրառվել ՀՀ-ում, թեև կան նվազման միտումներ: Դեռ 2008 թվականին Վճռաբեկ դատարանը *Ասլան Ավետիսյանի* գործով նախադեպով սահմանել է, որ խափանման միջոց կալանքի ժամկետները չեն կարող երկարաձգվել ձևական հիմքերով, օրենսդրական նորմերի պարզ շարադրմամբ, այլ դրա փոխարեն կալանքի երկարաձգման անհրաժեշտությունը պետք է յուրաքանչյուր դեպքում պատճառաբանել գործի փաստերից բխող իրական ու վերաբերելի պատճառներով: Ի հավելումն, մշակվել ու Ազգային ժողովի օրակարգում ընդգրկվել է նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որով սահմանվում է անազատության հետ չկապված խափանման միջոցի այլընտրանքներ, որոնք կարող են էապես նվազեցնել կալանքի կիրառումը:

Հաշվի առնելով վերը նշված զարգացումները, գտնում ենք, որ և անհատական, և ընդհանուր բնույթի միջոցներով կառավարությունը կատարել է սույն գործով վճիռը:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը.	25083/05
Վճիռը կայացվել է.	16/03/2010
Ուժի մեջ է մտել.	16/10/2010

Արձանագրվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմքով, որ Վճռաբեկ դատարանը չի ընդունել բողոքարկուի ժամկետանց վճռաբեկ բողոքը, առանց հաշվի առնելու, որ բողոքարկուն բողոքարկվող դատական ակտը ստացել էր ուշացումով, որի պայմաններում չէր կարող արդյունավետ կերպով բողոքարկել դատական ակտը, որի տեքստը իրեն հայտնի չէ: Արդյունքում, սահմանվել է դատարանի մատչելիության իրավունքի խախտում:
Գործողությունների զեկույցը ներկայացվել է 22/04/2014թ.-ին:

Եզրահանգում

Անհատական միջոցներ – Սահմանված փոխհատուցման գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – վճիռը թարգմանվել, հրապարակվել ու ընդգրկվել է դատավորների ու դատախազների վերապատրաստման ծրագրերում: Եթե սույն գործի հիմքում ընկած ժամանակահատվածում տվյալ դատական ակտի բողոքարկման ժամկետը 10 օր էր, օրենսդրական փոփոխությունների արդյունքում այդ ժամկետը երկարաձգվել է մինչև մեկ ամիս, իսկ միջանկյալ դատական ակտերի դեմ բողոքարկման ժամկետը՝ 15 օր: Այսինքն, ներկայումս դատական երաշխիքները ավելի լայն պաշտպանության միջոցներ են ապահովում, քան խնդրո առարկա ժամանակահատվածում:
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ վճիռը կատարվել է անհատական և ընդհանուր միջոցների շրջանակներում:

Մելիքյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը.	9737/06
Վճիռը կայացվել է.	19/02/2013
Ուժի մեջ է մտել.	19/05/2013

Մելիքյանի գործով արձանագրվել է դատարանի մատչելիության կամ դատարանի իրավունքի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով։ Մելիքյանը փորձել է վիճարկել մի գործարանի սեփականաշնորհման կառավարության որոշումը դատարանում, սակայն նախկինում Քաղաքացիական դատավարության օրենսգրքում գործում էր 160-րդ հոդվածը, որը արգելում էր դատարաններում վիճարկել ՀՀ նախագահի, կառավարության անդամների հրամանագրերը, կառավարության որոշումները, և այլն։ Կիրառելով այդ սահմանափակող հոդվածը, դատարանները մերժել են հայցադիմումը ընդունելիության հարցը։

Եզրահանգում

Նախարարների կոմիտեն դեռ չի սկսել այս գործով վճռի կատարման վերահսկողության վարույթը։ Այդուհանդերձ, մենք փաստում ենք, որ այս վճիռը, որը ընդունվել է բավականին ուշացումով, նույնպես կատարվել է։ Մասնավորապես, անհատական միջոցների շարքում փոխհատուցման գումարը վճարվել է, իսկ գործի վերաբացման դիմում չի ներկայացվել։ Իսկ ինչ վերաբերում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածին, ապա այդ հոդվածը հակասահմանադրական է ճանաչվել ՍԴ-ի կողմից դեռ 2006 թվականին։

Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը.	32283/04
Վճիռը կայացվել է.	17.06.2008
Ուժի մեջ է մտել.	17.09.2008

Մելտեքս ՍՊԸ (Ա1+ հեռուստաընկերություն) ընկերությունը 2003 թվականին մասնակցել է հեռարձակման լիցենզավորման յոթ մրցույթների, սակայն բոլոր մրցույթներում պարտվել է: Բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ը հրաժարվել է ընկերությանը տրամադրել լիցենզիայի դիմումները մերժելու մասին առանձին որոշումներ: Իր որոշումներում ՀՌԱՀ-ը բավարարվել է միայն հաղթող կազմակերպության վերաբերյալ կայացրած իր որոշման պատճեն ընկերությանը ուղարկելով՝ պատճառաբանելով, որ այդ որոշումը միաժամանակ հանդիսանում է նաև լիցենզիան մերժելու մասին որոշում, որի մեջ, սակայն, որևէ պատճառաբանություն չի տրամադրվել: Ընկերությունը ներպետական դատարաններում վիճարկել է ՀՌԱՀ-ի կողմից իր որոշումների չպատճառաբանելու հանգամանքը, սակայն դատարանները մերժել են նրա բոլոր դիմումները: Եվրոպական դատարանը որոշել է, որ ՀՌԱՀ-ի կողմից իր որոշումները չպատճառաբանելը այդ մարմնին տվել է գործելու անկառավարելի ու անսահմանափակ հայեցողություն, որը հանգեցրել է անորոշության և որի հիմքով էլ արձանագրվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի օրինականության սկզբունքի խախտում: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 30,000 եվրո ոչ նյութական վնասի և դատական ծախսերի դիմաց:
2011 թվականի հունիսի 8-ին Նախարարների կոմիտեն որոշում կայացրեց փակել գործի վարույթը այն հիմքով, որ ՀՀ-ն կատարել է վճռի կատարման հետ կապված իր բոլոր պարտականությունները:[6] Կոմիտեն այս որոշումը կայացնելիս հաշվի էր առել հետևյալ երկու հանգամանքները. առաջին, փոփոխության է ենթարկվել Ռադիոյի և հեռուստատեսության մասին ՀՀ օրենքը, որով ՀՌԱՀ-ին պարտավորեցվում էր պատճառաբանել իր որոշումները, երկրորդ, անցկացվել է լիցենզավորման մրցույթ և ընկերությանը հնարավորություն է տրվել մասնակցել մրցույթին:

Եզրահանգում

Գտնում ենք, որ Նախարարների կոմիտեն չի կայացրել օբյեկտիվ որոշումը և այդ իմաստով ՀՀ-ն չի կատարել վճռի կատարման իր պարտավորությունը սույն գործով: Կոմիտեն հաշվի չի առել, որ որոշման կայացման օրվա դրությամբ, անհատական միջոցների շրջանակներում, որը վկայակոչվել է Կոմիտեի կողմից վերը նշված որոշման մեջ որպես վճռի կատարման օբյեկտիվ պայմաններից մեկը, ընկերությունը

[6] Տե՛ս Կոմիտեի փաստաթուղթ CM/ResDH(2011)39:

դեռ շարունակում էր վիճարկել ՄԻԵԴ վճռի հիման վրա իր գործի վերաբացման հնարավորությունը: Ընդ որում, Կոմիտեն տեղյակ է եղել նման վարույթի մասին: Մասնավորապես, ընկերությունը թիվ DD(2009)307E և թիվ DD(2010)72 գրություններով մանրամասնորեն տեղեկացրել է գործի վերաբացման նպատակով նախաձեռնված վարույթների ընթացքի մասին, իսկ Կոմիտեն էլ արձագանքել է դրանց՝ 14.09.2009թ. թիվ 1092 և 02.03.2010թ. թիվ 1078-րդ նիստերում ՀՀ կառավարությունից պահանջելով ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Մելտեքս ընկերության կողմից նախաձեռնած վերանայման դատական վարույթների մասին: Այդուհանդերձ, Կոմիտեն որոշում է կայացրել վարույթը փակելու մասին՝ առանց հաշվի առնելու այս դատական գործերի հետագա ճակատագրի մասին:

Այդ դատական գործերը ավարտվեցին նրանով, որ ընկերությանը այդպես էլ չհաջողվեց հասնել նրան, որպեսզի ՄԻԵԴ վճռի հիման վրա վերաբացվեն յոթ լիզենզավորման գործերով հարուցված երկու դատական գործերը և ազգային դատարանների վիճահարույց որոշումները, որոնցում Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սխալ էր կիրառվել (որը հաստատվել է հենց ՄԻԵԴ վճռով, քանի որ հակառակ դեպքում հենց այս հոդվածի խախտում չէր արձանագրվի) վերաքննվեն: Հենց այս փաստը խոսում է այն մասին, որ 2008թ. հունիսի 16-ի վճիռը չի կատարվել, քանի որ չի ապահովվել գործի վերաբացում ու, որ առավել կարևոր է, վերաքննություն:

Մինասյանը և Սեմիրջյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *27651/05*
Վճիռը կայացվել է. *23.06.2009*
Ուժի մեջ է մտել. *23.09.2009*

Տե՛ս նաև *Հովհաննիսյանն ու Շիրոյանը ընդդեմ Հայաստանի*
Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Դանիելյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի
Թունյանն ու այլոք ընդեմ Հայաստանի

Սույն գործը Կոմիտեի կողմից քննվում է որպես առանցքային (LEAD) գործ վերը նշված չորս գործերի առնչությամբ։
Այս վճիռը ՄԻԵԴ-ի կողմի կայացված առաջին վճիռն է «Հյուսիսային պողոտայի» գործերի շարքից։ Սույն գործով ՄԻԵԴ-ը կայացրել է երկու դատական ակտ՝ գույքի օտարման մասով և փոխհատուցման մասով։ Գույքի օտարման մասով ՄԻԵԴ-ը սահմանել է, որ սեփականատիրոջ (Մինասյան) և օգտագործողի (Սեմիրջյան – սեփականատիրոջ դուստրը) գույքային իրավունքի միջամտությունը օրենքով սահմանված կարգով չի եղել, քանի որ օտարումը իրականացվել է կառավարության որոշման, այլ ոչ թե Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի հիման վրա՝ ինչպես սահմանվում է Սահմանադրության 31-րդ հոդվածով։ Այս հիմքով ՄԻԵԴ-ը սահմանել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված օրինականության սկզբունքի խախտում։ Փոխհատուցման մասով ՄԻԵԴ-ը գտել է, որ քանի որ հնարավոր չէ պարզել գույքի ճշգրիտ շուկայական արժեքը (քանի որ գույքը ոչնչացվել է), որոշում կայացնելիս կօգտվի իր հայեցողության իրավունքից և իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերից։ Այդ կերպ դատարանը որոշել է իր հայեցողությամբ սահմանել 8,000 եվրոյի չափով փոխհատուցում նյութական վնասի դիմաց և 6,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց։

Եզրահանգում

Անհատական և *ընդհանուր* միջոցներ - նշված գործում, ինչպես նաև վերը վկայակոչված նման գործերով, խնդրո առարկա հարցը կայանում էր նրանում, թե արդյոք գույքային իրավունքի միջամտությունը տեղ էր ունեցել օրենսդրական կարգավորմամբ, և քանի որ տվյալ ժամանակահատվածում բացակայում էր պետական կարիքների համար քաղաքացու գույքի օտարման մասին առանձին օրենք, սահմանվեց օրինականության սկզբունքի խախտում։ Հետևաբար, Նախարարների կոմիտեն 2006թ.-ին «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի ընդունում դիտեց որպես սույն գործով և վկայակոչված նույնանման գործերով վճիռների կատարման կարևոր քայլ։

25/05/2013թ.-ին ՀՀ կառավարությունը Նախարարների կոմիտեին ուղարկել է Գործողությունների ծրագիր, որը ներկայումս քննության փուլում է: Այդուհանդերձ, Նախարարների կոմիտեն խնդրել է ՀՀ կառավարության տրամադրել տեղեկություն այն մասին, առաջին, թե արդյոք նշված օրենքը հստակորեն կարգավորում է գույքի օգտագործողների իրավունքների միջամտության հարցը գույքը օտարելիս, երկրորդ, թե արդյոք առկա է հստակ ձևավորված դատական պրակտիկա գույքի օտարումը Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այս երկու հարցերին ՀՀ կառավարությունը դեռ չի պատասխանել:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործով երկու վճիռներն էլ թարգմանվել, հրապարակվել ու ընդգրկվել են դատավորների և դատախազների վերապատրաստման ծրագրերում, փոքր ինչ վերապահումով գտնում ենք, որ իշխանությունները մեծամասամբ կատարել են սույն գործով և վկայակոչված նույնանման գործերով ՄԻԵԴ վճիռները: Ինչ վերաբերում է վերապահմանը, ապա դա վերաբերում է այն հանգամանքին, որ Կոմիտեի կողմից առաջադրված հարցերին դեռ պատասխաններ չեն տրվել:

Միխթարյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *22390/05*
Վճիռը կայացվել է. *02.12.2008*
Ուժի մեջ է մտել. *04.05.2009*

Սույն գործով վճռի կատարման վերահսկողական վարույթը Նախարարների կոմիտեի կողմից իրականացվում է *Թադևոսյանի*, *Կարապետյանի* և *Կիրակոսյանի* գործերի հետ միասին որպես մեկ խումբ: Հետևաբար, փաստերի և համապատասխան եզրահանգման համար տե՛ս Տե՛ս *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործը վերևում:

Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	6562/03
Վճիռն ընդունվել է	11.01.2007
Ուժի մեջ է մտել	11.04.2007

Դիմողը՝ Արմեն Մկրտչյանը ենթարկվել է վարչական տույժի 500 դրամի չափով չթույլատրված հանրահավաքին մասնակցելու համար: Եվրոպական դատարանը գտել է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում (2002 թվականին) Հայաստանի Հանրապետությունում բացակայում էր հանրահավաքների, ցույցերի և երթերի անցկացման և թույլատրման հարցերը կարգավորող որևէ օրենք: Այս հիմքով ՄԻԵԴ-ը գտել է, որ հանրահավաքների իրավունքի միջամտությունը (տույժի ենթարկելը) չի կատարվել օրենքով սահմանված կարգով՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, և արձանագրել է այս հոդվածի խախտում:
Նախարարների կոմիտեն 2008թ. մարտի 27-ին որոշել է փակել գործով վարույթը՝ համարելով, որ Հայաստանի Հանրապետությունը ամբողջությամբ կատարել է ՄԻԵԴ վճիռը:

Եզրահանգում

Նախարարների կոմիտեի որոշումը գործով վարույթը փակելու մասին պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը 28/04/2004թ.-ին ընդունել էր «ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցներ անցկացնելու մասին» օրենք, որն ամբողջությամբ լրացնում էր քաղաքացիների կողմից իրենց իրավունքների իրականացման ընթացքում առաջացած բացը՝ հավաքների անցկացման կարգավորումը օրենքով[7]:
Հաշվի առնելով, որ գործի վերաբացման համար ընդհանուր իրավասության դատարան անհատական դիմում ներկայացված չի եղել Ա. Մկրտչյանի կողմից, գտնում ենք, որ սույն գործով ՀՀ-ն ամբողջությամբ կատարել է վճռի կատարման իր պարտականությունը՝ համաձայն Նախարարների կոմիտեի Rec(2004)5 հանձնարարականի:

[7] Նշված օրենքը 2011թ. ապրիլի 11-ին փոխարինվեց նոր՝ «Հավաքների ազատության մասին» օրենքով, որն առավել արդյունավետ և իրավաչափ գործիքներով էր կարգավորում հավաքների իրականացման քաղաքացիների սահմանադրական իրավունքը:

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	12895/06
Վճիռն ընդունվել է	05/06/2012
Ուժի մեջ է մտել	05/09/2012

Տե՛ս նաև.

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի
Մալխասյանն ընդդեմ Հայաստանի
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Մուրադխանյանի գործով արձանագրվել է խախտում այն բանի համար, որ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելիս (որը 2007թ թվականին ճանաչվեց հակասահմանադրական) խափանման միջոց կալանքի ժամկետները հստակորեն չեին սահմանվել (օրինականության սկզբունքի խախտում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մաս)։ Ի հավելումն, արձանագրվեց խախտում նաև այն հիմքով, որ կալանքի ժամկետները դատարանների կողմից երկարաձգվել էին ձևական և շաբլոնային հիմքերով (կալանքի ողջամիտ ժամկետներ և հիմքեր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մաս)։

Եզրահանգում

Տե՛ս նաև Պողոսյանի գործով եզրահանգումը. իշխանությունները ներկայացրել են Գործողությունների ծրագիր, որը ներկայումս ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից։
Անհատական միջոցներ - փոխհատուցման գումարը վճարվել է։ Գործի վերաբացման դիմում ներկայացվել է, որն ընդունվել է Վճռաբեկ դատարանի կողմից և 21/06/2013թ.-ին հարուցվել է վերանայման վարույթ։ Վերանայման վարույթի շրջանակներում Վճռաբեկ դատարանը բեկանել է իր նախկին երեք որոշումները խափանման միջոց կալանքի մասին, որից հետո եզրակացրել է, որ վիճարհարույց որոշումները վերանայելու համար բացակայում է նոր հանգամանքը՝ այնքանով, որքանով նոր հանգամանքը կբխեր ՄԻԵԴ կողմից արձանագրված խախտումից։
Ընդհանուր միջոցներ – Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում։ Այս գործը և վկայակոչված հինգ գործերով վճիռները ընդգրկվել են դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացներում։ Առաջին դրվագով սահմանված խախտումը այլևս չի կարող

կրկնվել պրակտիկայում, քանի որ քրեական գործի լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը ճանաչվել է հակասահմանադրական ու վերացվել է: Ինչ վերաբերում է երկրորդ դրվագին, ապա այս առումով Կոնվենիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող ճանաչված պրակտիկան դեռ շարունակվում է կիրառվել ՀՀ-ում, թեև կան նվազման միտումներ: Դեռ 2008 թվականին Վճռաբեկ դատարանը *Ասլան Ավետիսյանի* գործով նախադեպով սահմանել է, որ խափանման միջոց կալանքի ժամկետները չեն կարող երկարաձգվել ձևական հիմքերով, օրենսդրական նորմերի պարզ շարադրմամբ, այլ դրա փոխարեն կալանքը երկարաձգման անհրաժեշտությունը պետք է պատճառաբանել գործի փաստերից բխող իրական պատճառներով:
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ և անհատական, և ընդհանուր բնույթի միջոցներով կառավարությունը կատարել է սույն գործով վճիռը:

Առաջին դրվագով սահմանված խախտում նախկինում լայնորեն կիրառվող պրակտիկա է, որը սակայն 2009թ. դեկտեմբերին Վահրադյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումից հետո ամբողջությամբ վերացվեց: Երկրորդ և երրորդ դրվագներով սահմանված խախտումներով նույնպես ընդունվել են նախադեպային որոշումներ Վճռաբեկ դատարանի կողմից: Երրրորդ դրվագով սահմանված խախտումը որպես պրակտիկա նույնպես վերացել է (վերաքննիչ դատարանի կողմից բողոքը չընդունելը այն հիմքով, որ քրեական գործը նախաքննության փուլից մուտք է եղել դատարան), իսկ երկրորդ դրվագով սահմանված խախտման հիմքով պրակտիկան (կալանքի ժամկետի երկարաձգումը ձևական հիմքով) շարունակում է դեռևս կիրառվել, թեև այս առումով դրական զարգացումներ նույնպես կան:
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ սույն վճիռը կատարվել է իշխանությունների կողմից:

Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	11724/04
Վճիռն ընդունվել է	06.12.2007
Ուժի մեջ է մտել	06.03/2008

Դիմողները Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից պատշաճ կերպով չեն ծանուցվել դատական նիստի մասին, որի պատճառով զրկվել են դատաքննությանը մասնակցելու հնարավորությունից: Դատական նիստը բացելիս նախագահող դատավորը հայտարարել է, որ ծանուցագրի առաքումը ինքնին հանդիսանում է պատշաճ ծանուցում, որի հիմքով եզրակացրել է, որ բողոքարկուները անձամբ ստացել են դատական ծանուցագիրը, սակայն նախընտրել են դատարան չներկայանալ և այդ հիմքով դատական քննությունը որոշել է անցկացնել առանց կողմից ներկայության: Եվրոպական դատարանը համարել է դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում, քանի որ դատարանը պատշաճ միջոցներ չի ձեռնարկել պարզելու համար, թե արդյոք կողմը իրոք ստացել էր ծանուցագիրը, թե՝ ոչ: Եվրոպական դատարանը սահմանել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում: 14/09/2011թ.-ին Նախարարների Կոմիտեն հայտարարել է սույն գործով վճռի կատարման վարույթի ավարտի մասին:

Եզրահանգում

Անհատական միջոցներ - դիմումատուները ՄԻԵԴ վճռի հիման վրա ներկայացրել են գործի վերաբացման դիմում, որը բավարարվել է Վճռաբեկ դատարանի կողմից. Վճռաբեկ դատարանը բեկանել է իր և վերաքննիչ դատարանի նախկին որոշումները և գործը ուղարկել է առաջին ատյանի դատարան նոր քննության: Նոր քննության ընթացքում ապահովվել է դիմողների ներկայությունը և նրանց հնարավորություն է տրվել վիճարկել գործով ապացույցները: Գործով քննության ընթացքում դատարանը վերահաստատել է իր նախկին որոշումը: Գտնում ենք, որ սույն գործով ՀՀ-ն կատարել է ՄԻԵԴ վճիռը ամբողջությամբ. գործը վերաբացվել է և կողմին հնարավորություն է տրվել մասնակցել գործի քննությանը ողջ ծավալով:
Ընդհանուր միջոցներ - այս գործով վճռի հիման վրա ՀՀ դատական պրակտիկայում հիմնովին վերանայվեց կողմերին ծանուցելու դատական պրակտիկան. եթե նախկինում բավարար էր համարվում դատական նիստի ծանուցագրի առաքումը, ապա ներկայումս պահանջվում է նաև, որպեսզի դատարանը մինչև նիստի նշանակումը համոզվի նաև, որը կողմը ստացել ծանուցագիրը, որը հավաստումն է ծանուցագրի ստացումը հավաստող ստացականի ստացումը: Վերը նշվածի հիման վրա գտնում ենք որ իշխանությունները կատարել են վճիռ անհատական և ընդհանուր բնույթի միջոցների մասով:

Շոլոխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի

Գանգատ թիվ	40358/05
Վճիռն ընդունվել է	31.07.2012
Ուժի մեջ է մտել	31.10.2012

Արձանագրվել է խախտում այն հիմքով, որ Մոլդովայի դատական ակտի ճանաչման ու կատարման վարույթում ՀՀ դատարանը հրաժարվել է ճանաչել ու կատարել այդ դատական ակտը՝ մերժումը պատճառաբանելով անորոշ ու ոչ վերաբերելի հիմքերով։ Արդյունքում, Մոլդովայի քաղաքացու համար ՀՀ դատարանի բարենպաստ դատական ակտը, որը մտել էր ուժի մեջ ու դարձել վերջնական, մնացել է չկատարված։ Արդյունքում, խախտվել է քաղաքացու դատարանի իրավունքը Կոնվենցիայի 6-ր հոդվածի 1-ին մասի ներքո։ Կառավարությունը ներկայացրել է գործողությունների ծրագիր 18/09/2013-ին, որը դեռ ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից։

Եզրահանգում

Անհատական միջոցներ – սահմանված փոխհատուցման գումարը վճարվել է։ Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել։
Ընդհանուր միջոցներ – խնդրո առարկա հարցը վերաբերում է դատական ակտի պատճառաբանմանը։ Այս առումով օրենսդրական փոփոխության կարիք չկա, քանի որ այս սկզբունքը ամրագրված է մի շարք օրենսդրական ակտերում և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում։
Վերը նշվածի հիման վրա գտնում ենք, որ վճիռը և անհատական, և ընդհանուր բնույթի միջոցների առումով կատարվել է։

Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	21638/03
Վճիռն ընդունվել է	30.12.2007
Ուժի մեջ է մտել	02.06.2008

Ընկերության վճռաբեկ բողոքը չի քննվել Վճռաբեկ դատարանի կողմից պետական տուրքը վճարած չլինելու հիմքով: Ընկերությունը վճռաբեկ բողոքի հետ ներկայցրած է եղել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմում, որում ներկայացրել էր փաստեր այն մասին, որ ընկերությունը ուներ ֆինանսական խնդիրներ: Վճռաբեկ դատարանի գրասենյակի աշխատակիցը նամակով տեղեկացրել է, որ բողոքը կթողնվի առանց քննության, եթե պետական տուրքը չվճարվի: Ի վերջո ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ: Եվրոպական դատարանը որոշել է, որ ընկերության դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվել է անհամաչափորեն այն հիմքով, որ Վճռաբեկ դատարանը պետք է նախ քններ միջնորդությունը և դատավարական որոշում կայացներ, մինչդեռ տվյալ դեպքում ոչ թե դատական կազմն է որոշում կայացրել, այլ գրասենյակի աշխատակիցը, որը նշանակում է, որ ընկերության իրավունքը մերժվել էր առանց քննելու դիմումի հիմքում ընկած փաստերը: Դատարանը նաև որոշել է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը, որը ի տարբերություն ֆիզիկական անձանց արգելում էր առևտրային կազմակերպություններին ազատել պետական տուրքի վճարումից, անիրավաչափ իրավակարգավորում էր:

Եզրահանգում

Անհատական միջոցներ - կազմակերպությունը ներկայացրել է գործի վերաբացման դիմում, որը բավարարվել է և Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկության կարգով քննել Տնտեսական դատարանի վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքը. սրանով վերականգնվել է դիմող ընկերության խախտված իրավունքը՝ անկախ այն հանգամանքից, թե գործի էության մասով ինչ որոշում է կայացրել դատարանը: Հաշվի առնելով դա, գտնում ենք, որ Հայաստանը կատարել է թիվ (2000)2 և Rec (2008)2 հանձնարարականների պահանջները:
Ընդհանուր միջոցներ - 04.2009թ.-ին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնց հիմքով արգելվում էր բավարարել առևտրային ընկերությունների՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումները, վերացվեցին ՀՕ-82 օրենքով: Վերը նշվածի հիման վրա գտնում ենք, որ սույն գործով Հայաստանի Հանրապետություն կատարել է եվրոպական դատարանի վճիռը:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	44068/07
Վճիռն ընդունվել է	20/12/2011
Ուժի մեջ է մտել	20/03/2012

Պողոսյանի գործը առանցքային (LEAD) գործ է և այս իմաստով վարույթը իրականացվում է հինգ հետևյալ գործերի համակցությամբ.

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի
Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Բոլոր նշված գործերը վերաբերում են խափանման միջոց կալանքի կիրառության տարբեր դրվագներին: Պողոսյանի գործով արձանագրվել է խախտում այն բանի համար, որ փախուստի մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, ում նկատմամբ ընտրված է եղել խափանման միջոց կալանք, նրան չեն տարել դատավորի մոտ, այլ տարել են կալանավայր: Ի հավելումն, արձանագրվել է խախտում նաև այն բանի համար, որ կալանքի ժամկետը երկարաձգելիս դատարանները ձևական հիմքեր են վկայակոչել, ինչպես նաև, որ վերաքննիչ դատարանը հրաժարվել է քննել առաջին ատյանի որոշման դեմ բերված բողոքը այն հիմքով, որ քրեական գործը արդեն մուտք է եղել դատարան:

Եզրահանգում

Բոլոր վեց գործերով իշխանությունները ներկայացրել են Գործողությունների ծրագիր, որը ներկայումս ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից:
Անհատական միջոցներ - փոխհատուցման գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում: Այս գործը և վկայակոչված հինգ գործերով վճիռները ընդգրկվել են դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացներում: Առաջին դրվագով սահմանված խախտում նախկինում լայնորեն կիրառվող պրակտիկա է, որը սակայն 2009թ. դեկտեմբերին Վահրադյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումից հետո ամբողջությամբ վերացվեց: Երկրորդ և երրորդ դրվագներով սահմանված խախտումներով նույնպես ընդունվել են

նախադեպային որոշումներ Վճռաբեկ դատարանի կողմից: Երրորդ դրվագով սահմանված խախտումը որպես պրակտիկա նույնպես վերացել է (վերաքննիչ դատարանի կողմից բողոքը չընդունելը այն հիմքով, որ քրեական գործը նախաքննության փուլից մուտք է եղել դատարան), իսկ երկրորդ դրվագով սահմանված խախտման հիմքով պրակտիկան (կալանքի ժամկետի երկարաձգումը ձևական հիմքով) շարունակում է դեռևս կիրառվել, թեև այս առումով դրական զարգացումներ նույնպես կան:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ սույն վճիռը կատարվել է իշխանությունների կողմից:

Պողոսյանն ու Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 22999/06
Վճիռը կայացվել է. 12/06/2012
Ուժի մեջ է մտել. 12/09/2012

Տե՛ս նաև.

Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Արմեն Բաղդասարյանը դատապարտվել է 15 տարվա ազատազրկման, սակայն հինգ ու կես տարի հետո արդարացվել է: Դիմել է դատարան փոխհատուցման պահանջով, բավարարվել է նյութական փոխհատուցման պահանջը և դատական ծախսերը: Բարոյական վնասի պահանջը մերժվել է այն հիմքով, որ Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը «վնաս» հասկացության տակ չի սահմանում նաև (ոչ նյութական) բարոյական վնաս հասկացությունը: Եվրոպական դատարանը սահմանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի (արդարացի փոխհատուցում անօրինական ազատազրկման դիմաց) և թիվ 7 Արձանագրության 32-րդ հոդվածի խախտում (վնասի փոխհատուցում անօրինական դատապարտման դիմաց) և 13-րդ հոդվածի խախտում (արդյունավետ իրավական պաշտպանության միջոց):

Եզրահանգում

Անհատական միջոցներ – սահմանված փոխհատուցման վճարները կատարվել են: Գործի վերաբացման դիմումներ չեն ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – տե՛ս նույնանման հանգամանքների ներքո եզրահանգումները Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի գործում:

Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը.	38978/03
Վճիռը կայացվել է.	27.05.2008
Ուժի մեջ է մտել.	27.08.2008

Դիմումատուն ցանկացել է առաջադրվել խորհրարանական ընտրություններում, սակայն նրա դիմումը մերժվել է ԿԸՀ-ի կողմից այն հիմնավորմամբ, որ վերջինս ԿԸՀ-ին տեղյակ չի պահել իր անունով գրանցված գույքի մասին: Մասնավորապես, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն Ընտրական հանձնաժողովի կողմից ուղարկված գրությանը ի պատասխան տեղեկացրել է, որ բնակարանում, որտեղ բնակվում էր դիմումատուն, գրանցված էին վեց անձ, ներառյալ՝ դիմումատուն և այդ հիմքով բոլորը, այդ թվում նաև դիմումատուն, հանդիսանում էին բնակարանի համասեփականատեր: Դիմումատուն որոշումը վիճարկել է դատական կարգով՝ նշելով, որ որևէ փաստաթուղթ չի կեղծել, որ տվյալ բնակարանը 1994թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ սեփականաշնորհվել է իր մոր անունով: Այդուհանդերձ, դատարանները մերժել են նրա հայցապահանջը: Եվրոպական դատարանը որոշել է, որ ԿԸՀ-ն չի դրսևորել համաչափ մոտեցում, հաշվի չի առել, որ դիմումատուի գործողություններում բացակայում էր գույք թաքցնելու դիտավորությունը, ավելին, տեղեկատվությունը, որը դիմումատուն ենթադրաբար թաքցրել է, վերաբերում է 64.7 քմ մակերեսի ընդամենը մի փոքր մասի սեփականատեր լինելու փաստին, և չի կարելի համարել, որ կար իրական վտանգ, որ նման փոքր նշանակություն ունեցող տեղեկությունը կարող է մոլորության մեջ գցել ընտրազանգվածին: Արդյունքում դատարանը սահմանել է ընտրվելու իրավունքի խախտում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի հիմքով և սահմանել է ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում 3,000 եվրոյի չափով:

Եզրահանգում

Անհատական միջոցներ – սահմանված փոխհատուցման գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ - Նախարարների կոմիտեն ընդհանուր միջոցների շրջանակներում ՀՀ կառավարությունից խնդրել էր տրամադրել տեղեկություն այն մասին, թե արդյոք անհրաժեշտություն կար օրենսդրությունում հստակեցնել ընտրաթեկնածուների գույքի գրանցման ընթացակարգը, ինչպես նաև պարզաբանել, թե արդյո՞ք գոյություն ունի թեկնածուների գրանցման վեճերի հետ կապված առաջին ատյանի դատարանների որոշումների վիճարկման արդյունավետ իրավական պաշտպանության միջոց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԻԵԴ վարույթի ընթացքում կառավարության կողմից ներկայացված նկատառումներում կային հակասություններ ազգային դատարանի կողմից գործով դատաքննության

ընթացքում տրված եզրահանգումների հետ: Այդ հարցադրմանը կառավարությունը պատասխանել է սույն թվի ապրիլի 22-ին ներկայացված Գործողությունների զեկույցով, որում ներկայացվել է 26/05/2011թ. Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները ընտրաթեկնածուների գույքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև ԿԸՀ-ի որոշումների բողոքարկման վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվել է, որ նոր Ընտրական օրենսգրքի համաձայն գույքի և եկամուտների հայտարարագրերը այլևս նախապայման չեն հանդիսանում թեկնածուհի գրանցման համար, որ ներկա օրենսդրությամբ պահանջվում է ներկայացնել միայն թեկնածուի, այլ ոչ թե նրա ընտանիքի անդամների գույքի վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև, որ ներկա օրենքը այլևս չի սահմանում տույժ գույքի վերաբերյալ տեղեկություն չտրամադրելու համար: Ի հավելումն, ներկայացվել է նաև ԿԸՀ-ի որոշումների բողոքարկման ընթացակարգերի բարելավման վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, որ նոր Ընտրական օրենսգրքով, ի տարբերություն նախկինի, ավելի լայն բողոքարկման ընթացակարգեր են սահմանված: Օրինակ, տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարելի է բողոքարկել և՛ ԿՀԸ, և՛ վարչական դատարան, իսկ ԿՀԸ-ի որոշումը՝ վարչական դատարան և Սահմանադրական դատարան:

Հաշվի առնելով վերը նշված համակարգային փոփոխությունները թեկնածուների գրանցման և բողոքարկման ընթացակարգերում, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ, մասնավորապես, որ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և այլ միջոցներով, որ կառավարության կողմից վճարվել են փոխհատուցման սահմանված գումարները, ինչպես նաև, որ գործի վերաբացման համար դիմում չի ներկայացվել, գտնում ենք, որ ՀՀ կառավարությունը կատարել է սույն գործից բխող իր պարտականությունները:

Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. *35738/03*
Վճիռը կայացվել է. *13.01.2009*
Ուժի մեջ է մտել. *13.04.2009*

Տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* որպես **առանցքային** գործ։

Տե՛ս նաև. *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի*
Ամիրյանն ընդդեմ Հայաստանի
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-1
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի-2

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	22491/08
Վճիռն ընդունվել է	02/10/2012
Ուժի մեջ է մտել	02/01/2013

Տե՛ս նաև.

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի
Մալխասյանն ընդդեմ Հայաստանի
Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի

Ժիրայր Սեֆիլյան գործով արձանագրվել են նույն խախտումները, ինչ վերը նշված մի շարք գործերով՝ քրեական գործի փոխանցում դատարանին կալանքի ժամկետի սպառումով (5-րդ հոդվածի 1-ին մաս), կալանքի ժամկետի երկարաձգում առանց վերաբերելի ու բավարար հիմքերի (5-րդ հոդվածի 3-րդ մաս)և կալանքի միջնորդության քննության մրցակցային պայմանների բացակայությամբ (5-րդ հոդվածի 4-րդ մաս) (տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի)։ Ի հավելումն, արձանագրվել է նաև 8-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ հեռախոսային խոսակցություններ գաղտալսումը չէր անցկացվել բավարար օրենսդրական կարգավորման պարագայում (տվյալ ժամանակահատվածում բացակայում էր օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենք և նման միջոցառումները կարգավորվում էի Քրեական դատավարության օրենսգրքի երկու հոդվածներով)։

Եզրահանգում

Անհատական միջոցներ – փոխհատուցման գումարը վճարվել է։ Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել։
Ընդհանուր միջոցներ – տե՛ս, այս առումով, *Փիրուզյանի* գործով համապատասխան եզրահանգումները։ Ի հավելում, օպերատիվ հետախուզական միջոցառումների օրենսդրական կարգավորման բացը վերացվել է Օպերատիվ հետախուզական գործունեության մասին առանձին օրենքի ընդունումով, որով կարգավորվում են այն հարցերը, որոնք կարգավորված չէին Քրեական դատավարության օրենսգրքով և որը հիմք էր հանդիսացել խախտում արձանագրելու համար։ Բացի այդ, սույն գործով վճիռը թարգմանվել, հրապարակվել ու ընդգրկվել է պաշտոնական տեղեկագրերում և դատավորների ու դատախազների վերապատրաստման դասընթացներում։ Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ վճիռը և անհատական, և ընդհանուր բնույթի միջոցառումների մասով ամբողջությամբ կատարվել է։

Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	33376/07
Վճիռն ընդունվել է	26/06/2012
Ուժի մեջ է մտել	26/09/2012

Խախտումը արձանագրվել է վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգով դատական քննության անցկացման փաստի հիմքով, որի առնչությամբ արձանագրվել է հրապարակային դատական քննության իրավունքի խախտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Դատարանը սահմանել է 2,100 եվրոյի չափով փոխհատուցում նյութական վնասի և ծախսերի դիմաց:
Կառավարությունը դեռ չի ներկայացրել Գործողությունների զեկույց

Եզրահանգում

Անհատական միջոցներ – փոխհատուցման համար սահմանված գումարը վճարվել է: Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել:
Ընդհանուր միջոցներ – վարչական դատավարության շրջանակներում վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգով գործի քննությունը այլևս չի կիրառվում 2005 թվականից ի վեր: Այսինքն, ընդհանուր միջոցներ կիրառելու անհրաժեշտություն չկա: Վերը նշվածի հիմքով գտնում ենք, որ վճիռը կատարվել է:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	33376/07
Վճիռն ընդունվել է	26/06/2012
Ուժի մեջ է մտել	26/09/2012

Գրիշա Վիրաբյանը ենթարկվել է խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի ոստիկանության աշխատակիցների կողմից։ ՄԻԵԴ-ը արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում նեգատիվ և պոզիտիվ պարտականությունների ներքո, մասնավորապես, որ արգելված վերաբերմունքը դրսևորվել է պաշտոնատար անձանց կողմից և որ այդ առումով արդյունավետ քննություն չի կատարվել։ ՄԻԵԴ-ը արձանագրել է նաև Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում (խտրականություն) այն հիմքով, որ խտրականության հիմքով ոստիկանական քննություն նույնպես չի կատարվել։ Արձանագրվել է նաև անմեղության կանխավարկածի խախտում 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, քանի որ նրա նկատմամբ քրեական գործը կարճելու մասին որոշման մեջ հնչել են մեղքի մասին եզրահանգումներ։ ՄԻԵԴ-ը սահմանել է 25,000 եվրո փոխհատուցում։

Եզրահանգում

Անհատական միջոցներ – փոխհատուցման համար սահմանված գումարը վճարվել է։ Ներկայացվել է գործի վերաբացման դիմում, որը բավարարվել է, Վճռաբեկ դատարանը բեկանել է իր նախկին՝ 13/05/2005թ. որոշումը և գործը ուղարկել է նոր քննության։ Նոր քննության շրջանակներում առաջին ատյանի դատարանը որոշել է վերացնել դատախազի 30/08/2004թ. որոշումը և վերսկսել գործով նախաքննությունը, որի շրջանակներում Գրիշա Վիրաբյանը հանդես էր գալիս որպես տուժող։ Այս վարույթը ներկայումս ընթացքի մեջ է։
Ընդհանուր միջոցներ – վճիռը թարգմանվել, հրապարակվել ու լայնորեն իրազեկվել է իրավակիրառողներին։ Վճիռը ընդգրկվել է դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացների ծրագրերում։ Ինչ վերաբերում է օրենսդրական փոփոխություններին, ապա դեռ մինչև սույն գործով վճիռը կայացնելը 2006 թվականին փոփոխության ենթարկվեց Քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը, որի նպատակն էր բացառել անձի նկատմամբ քրեական գործի կարճումը առանց անձի համաձայնության։ Նույն մոտեցումը առավել խորը պաշտպանական երաշխիքներով սահմանվում է նոր Քրեական դատավարության օրենսգրքով (հոդվ. 153)։
Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ սույն գործով վճիռը դեռ կատարվել է մասնակիորեն, քանի որ վերանայման վարույթը դեռ ընթացքի մեջ է։

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի

Գանգատ թիվ	33376/07
Վճիռն ընդունվել է	26/06/2012
Ուժի մեջ է մտել	26/09/2012

Տե՛ս նաև.

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի
Մալխասյանն ընդդեմ Հայաստանի
Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Փիրուզյանի գործով արձանագրվել են հետևյալ խախտումները. առաջին, դատաքննության ընթացքում պահվել է երկաթե ճաղավանդակի մեջ (տե՛ս Աշոտ Հարությունյանի գործով վճիռը) (Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում), երկրորդ, քրեական գործը նախաքննական մարմնի կողմից դատարանին փոխանցելիս սպառվել է խափանման միջոց կալանքի ժամկետը, որի արդյունքում անձը մինչև դատարանի կողմից նոր որոշման կայացումը մի որոշ ժամկետով մնացել էր կալանքի տակ՝ առանց դատարանի որոշման։ Նման իրավակարգավորում սահմանված էր (և շարունակում է սահմանված մնալ) Քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասով։ Երրորդ, կալանքի ժամկետները երկարաձգելիս վերաբերելի ու բավարար պատճառներ չեն տրվել, ներկայացվել են ձևական ու շաբլոնային պատճառաբանություններ, չորրորդ, գրավի միջնորդությունը մերժվել է զուտ այն հիքով, որ կալանավորը մեղադրվում էր ծանրա հանցագործության կատարման մեջ (Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մաս), չորրորդ, կալանքի ստուգման դատական վարույթում պաշտպանական կողմին չեն տրամադրվել քրեական գործի այն նյութերը, որոնք հիմք են հանդիսացել կալանքի ժամկետի երկարաձգման համար, այսպիսով խախտվել է դատավարության մրցակցային բնույթը (5-րդ հոդվածի 4-րդ մաս), հինգերորդ, վերաքննիչ դատարանը հրաժարվել է քննել առաջին ատյանի դատարանի՝ կալանքի երկարաձգման որոշման դեմ բերված բողոքը այն հիմքով, որ քրեական գործը արդեն մուտք է եղել դատարան (5-րդ հոդվածի 4-րդ մաս)։ Դատարանը ընդհանուր առմամբ սահմանել է 8,018 եվրոյի փոխհատուցում։

Եզրահանգում

Տե՛ս նաև Պողոսյանի գործով եզրահանգումը։

Իշխանությունները ներկայացրել են Գործողությունների ծրագիր, որը ներկայումս ուսումնասիրվում է Կոմիտեի կողմից։
Անհատական միջոցներ - փոխհատուցման գումարը վճարվել է։ Գործի վերաբացման դիմում չի ներկայացվել։ Դիմողը արդարացվել է, որի արդյունքում նա ազատ է արձակվել։
Ընդհանուր միջոցներ – Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում։ Այս գործը և վկայակոչված հինգ գործերով վճիռները ընդգրկվել են դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացներում։ Առաջին դրվագով սահմանված խախտման առումով անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում այլևս չկան երկաթե ճաղավանդակներ դատարաններում։ Երկրորդ դրվագի առումով սահմանվել է կայուն հաստատված նախադեպային իրավունք, համաձայն որի յուրաքանչյուր քրեական գործ անհրաժեշտ է ուղարկել դատարան կալանքի ժամկետի սպառվելուց առնվազն մինչ 15 օր առաջ։ Այս մոտեցուը սահմանվել է լայնորեն հայտնի *Վարդանի Մինասյանի* գործով Վճռաբեկ դատարանի 10/04/2009թ. նախադեպով։ Ինչ վերաբերում է կալանքի երկարատև ժամկետներին և դրանց վերաբերելի ու բավարար հիմքերի բացակայությանը, ապա այս առումով արդեն նշվել է, որ այս պրակտիկան Հայաստանում թեև նվազելու միտում ունի, սակայն դեռ մնում է խնդրահարույց և հասարակության և իրավակիրառողների շրջանում դեռ դժգոհության տեղիք է տալիս։ Գրավի միջնորդության մերժումը զուտ մեղսագրված հանցագործության ծանրության աստիճանով այլևս վերացած պրակտիկա է և այս առումով թեև Քրեական դատավարության 143-րդ հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է, սակայն պրակտիկայում կիրառվում է Վճռաբեկ դատարանի *Տարոն Հակոբյանի* 2007թ. նախադեպը։ Ներկայումս դատարանները գրավի միջնորդությունը չեն մերժում մեղադրանքի ծանրությունից ելնելով։ Ինչ վերաբերում է կալանքի դատական վարույթի մրցակցային բնույթին, մասնավորապես, կալանքի համար հիմք հանդիսացած քրեական գործի նյութերը պաշտպանական կողմին չտրամադրելը, ապա այս պրակտիկան նույնպես ներկայումս վերացել է։ Կալանքը երկարաձգելիս դատարանները այլևս իրենց որոշումները չեն հիմնավորում մի փաստական տվյալով (կամ ապացույցով, և այլն), որը, ելնելով մրցակցային սկզբունքից, չի տրամադրվել պաշտպանական կողմին։ Այսպիսով, արձանագրված հինգ խախտումներից միայն մեկն է դեռ մնում վիճահարույց պրակտիկայում՝ կալանքի ժամկետների երկարաձգումը ձևական, ոչ վերաբերելի ու բավարար հիմքերով։
Հաշվի առնելով վերը նշված զարգացումները, գտնում ենք, որ և անհատական, և ընդհանուր բնույթի միջոցներով կառավարությունը կատարել է սույն գործով վճիռը։